Արձանագրություն N 3
ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան

30 հուլիսի 2018թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Դ. Դաբաղյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝	Ս. Մկրտչյան
	Ս. Շահմուրադյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Ա. Հակոբյան
	Հ. Ղազազյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Հ. Նավասարդյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Դ. Դաբաղյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
3. Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին,
4. Մերժված հայտերի մասին,
5. Բանակցությունների կազմակերպման մասին,
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Անհամապատասխանությունները շտկելու մասին
(Դ. Դաբաղյան)

Ընդունել ի գիտություն՝ քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել էին անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշել էր.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել՝ «ԲՐԻԴՋ» ՍՊԸ-ին՝ հայտը շտկելու նպատակով, որը պետք է ներկայացներ իր շտկումները էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, մինչև 30.07.2018թ. 15:00 ներառյալ:

Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել:
Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին
(Դ. Դաբաղյան)

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են

Չ/Հ	Մասնակցի անվանումը	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ

		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային գին
1	**Լուսային համակարգ (տաղավարային լույսեր)**	**հատ**	**14**		**4900000**
1	«Տիգման Գրուպ» ՍՊԸ	4081000	816200	4897200	
2	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	4550000	910000	5460000	
3	«Յունիմայն» ՍՊԸ	5515440	1103088	6618528	
2	**Լամպ**	**հատ**	**20**		**2751400**
1	«Տիգման Գրուպ» ՍՊԸ	258000	51600	309600	
2	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	2500000	500000	3000000	
3	«Յունիմայն» ՍՊԸ	3007200	601440	3608640	
3	**Լամպ**	**հատ**	**5**		**55800**
1	«Տիգման Գրուպ» ՍՊԸ	46500	9300	55800	
2	«Յունիմայն» ՍՊԸ	69300	13860	83160	
4	**Լամպ**	**հատ**	**8**		**98400**
1	«Տիգման Գրուպ» ՍՊԸ	82000	16400	98400	
2	«Յունիմայն» ՍՊԸ	112896	22579.2	135475.2	
5	**Լամպի կոթառ**	**հատ**	**1**		**18600**
1	«Յունիմայն» ՍՊԸ	13860	2772	16632	
6	**Լուսային ֆիլտր**	**հատ**	**2**		**126480**
1	«Յունիմայն» ՍՊԸ	132720	26544	159264	

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4.Մերժված հայտերի մասին

(Դ. Դաբաղյան)

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 42-րդ կետի՝ մերժել «ԲՐԻԴՋ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

5.Բանակցությունների կազմակերպման մասին

(Դ. Դաբաղյան)

Քանի որ 6-րդ չափաբաժնի համար՝ ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն վերը նշված չափաբաժնի համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. օգոստոսի 3-ին ժամը 11:30-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

6. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>**
(Դ. Դաբաղյան)

ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/13 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի բանակցությունների անցկացման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ս.թ օգոստոսի 3-ին ժամը 11:30-ին ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

Հանձնաժողովի.

նախագահ՝	Դ. Դաբաղյան
բացող անդամներ՝	Ս. Մկրտչյան
	Ս. Շահմուրադյան
գնահատող անդամներ՝	Ա. Հակոբյան
	Հ. Ղազացյան
քարտուղար՝	Հ. Նավասարդյան